ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N094102-7Բ

ք. Երևան <<31>> 01. 2019 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության գլխավոր քարտուղար՝ Ն.Հարությունյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու մի կողմից, և <<Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա>> ՊՈԱԿ-ը, ի դեմս կոնսերվատորիայի ռեկտորի պաշտոնակատար՝ Ս. Հովհաննիսյանի, ով գործում է կոնսերվատորիայի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող մյուս կողմից, ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի 09.4.1.02. բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում <<Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա>> ՊՈԱԿ-ի անվճար համակարգում ընդգրկված միջին տարեկան՝ 480 ուսանողի, ինչպես նաև ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողների ուսուցում, որի դիմաց Պատվիրատուն պարտավորվում է ուսանողական նպաստների ձևով իրականացնել ուսման վարձի փոխհատուցում:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված գինը կազմում է՝ 752 666 100 (յոթ հարյուր հիսուներկու միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, որը ներառում է անվճար համակարգի ուսանողների ուսման վարձի լրիվ փոխհատուցումը՝ 747 301 100 (յոթ հարյուր քառասունյոթ միլիոն երեք հարյուր մեկ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողների ուսման վարձի լրիվ փոխհատուցումը՝ 2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը՝ 2 745 000 (երկու միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ և սահմանամերձ համայնքների ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը՝ 120 000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 27-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	<<Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա >> ՊՈԱԿ
ք. Երևան, Կառավարական 2 շենք	ք. Երևան, Սայաթ-Նովա 1ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011034130	Հ/Հ 900018002072
Նախարարության գլխավոր քարտուղար ---------- Ն. Հարությունյան	Ռեկտորի պաշտոնակատար՝ ----------Ս. Հովհաննիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ